

## Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

### ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՏԵՔՍԵՆԸ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏՈՒՄ

Աշուղական երգի տեսակը իր ակունքներով բխում է ժողովրդական բանահյուսությունից և, անշուշտ, կրում է ժողովրդական բառ ու բանի, լեզվամտածողության կնիքը: Ըստ էության, աշուղական երգը, մասնավորապես օրորոցայինը, ժողովրդական տարերքով ու հենքով գրված հեղինակային տեքստ է: Աշուղական – ժողովրդական- հեղինակային տեքստի շղթան կարծես միաձուլվում է ժամանակի ընթացքում: Ավելին, աշուղական երգային տեքստը երբեմն դժվար է տարանջատել ժողովրդականից. երկու դեպքում էլ կարևորվում է ժողովրդի հուզաշխարհի ինդիքներին անդրադարձը: Աշուղական երգը, կարելի է ասել, գտնվում է ժողովրդականի և հեղինակայինի միջակայքում: Ուշագրավ է այն իրողությունը, որ աշուղական բանահյուսությունը սերտ առնչություն ունի ժողովրդական բանահյուսության հետ: Հատկանշական է, որ օրորոցայինը, լինելով քնարական երգի յուրօրինակ տեսակ, քիչ է հանդիպում աշուղների երգացանկում: Պատճառներից մեկը թերևս աշուղական բանահյուսության թեմատիկան է և այն, որ մեծ մասամբ աշուղական տեքստի հասցեատերը մեծահասակ ունկնդիրն է: Աշուղական բանարվեստում գերակշռողը սիրային երգերն են: Մակայն աշուղները արձագանքել են նաև ժողովրդին հուզող պատմաքաղաքական իրադարձություններին: Ազատասիրության, հայրենասիրության գաղափարները, լուսավորության հարցերը առաջատար թեմաներ են դարձել XIX դարի աշուղների երգերում<sup>1</sup>: Թեև աշուղական երգարվեստում կան մանկաշխարհին, մանկությանը առնչվող տեքստեր, այնուամենայնիվ օրորոցային տեքստերը սակավաթիվ են: Մասնավոր հանգամանքներով թելադրված՝ կարելի է հանդիպել նաև աշուղական օրորոցային երգի: Մյուս կողմից էլ՝ օրորոցայինը իր թեմատիկ տարրությամբ աշուղին հնարավորություն է տալիս ստեղծելու ինքնատիպ տեքստեր: Այս համատեքստում օրորոցայինը կարելի է համարել որպես բաց տեքստ: Աշուղական օրորոցայինները թեև սակավ, այնուհանդերձ անմիջական են, կարծես տվյալ պահին ծնվող ստեղծագործություններ են, այսրոպեական տեքստեր:

Աշուղական օրորոցային տեքստի բացառիկ օրինակ է Ջիվանու «Օրորոցի երգ» ստեղծագործությունը.

*Ննջե՛ գառնուկ, սիրո՛ւն գավակ,*

*Ննջե՛ օրորանին մեջը,*

*Ննջե՛ մի՛ լար, իմ աղավնյակ,*

*Միրուն օթևանին մեջը:*

Բերված օրորոցային տեքստի մյուս տողերում հիշատակվում է երեխայի մեծանալու, հայկական ոգու ձևավորման գաղափարը, որը արտահայտվում է լեզ-

<sup>1</sup> Հայկական համառոտ հանրագիտարան, գլխ. իմբ. Կ. Խուղավերդյան, հ. I, Հայկական Խորհրդային հանրագիտարան, Եր., 1990, էջ 243-244:

վառճական հնարով: Հետևաբար մանկան հոգեկերտվածքի ձևավորման համար կարևոր է դաստիարակությունն սկսել հենց օրորոցից օրորոցային տեքստի միջոցով: Նշված հատվածը կարելի է համարել նաև բարեմատլթանք- աղոթք տեքստ.

Քնի՛ր, որ մեծանաս, հոգի՛ս,  
Հայկական հոգվով նորոգվիս,  
Վարժապետիդ առջև չոքիս,  
Հայ ուսումնարանին մեջը:

Զիվանու օրորոցային տեքստը մանուկ ունկնդրին հորդորում է ճանաչել, պահպանել ու հարստացնել մայրենի լեզուն: Աշուղը այս օրորոցայինով ազգային ինքնագիտակցություն է արթնացնում երեխայի մեջ: Մեջբերենք Գ. Լևոնյանի խոսքերը աշուղի մասնավորապես լեզվական ծառայության մասին.

«Լեզուի խնդիրը լուրջ խնդիր է: Կրօնը մարդու ներքին աշխարհին է պատկանում, ուրեմն ազգը ամենից առաջ լեզուով է ազգ, հետևապես կենդանի լեզուն քանի կայ, կայ և այդ ազգը և քանի հարուստ է այդ լեզուն, այնքան այդ ազգը բարձր է վայրենական կեանքից: Աշուղը լեզուի խնդրում արժանի է ամենայն խրախուսանքի: Նոքա փրկության առաջին ճանապարհը ցոյց տուին մեզ և չը նայելով, որ նոցանից մեծ մասը հազիւ գրել կարդալ էին իմանում, յորդորեցին մեզ «գիր, դաֆտար, դալամ սիրել»: Վերջապես *նոքա կորուստից պահպանեցին հայ լեզուն այն ժամանակ, երբ կարծես ամեն ինչ մահ էր սպառնում նրան եւ իբրեւ մի թանգագին սեփականություն բերին հասցրբին մեր ժամանակները*<sup>2</sup>:

Գեղեցիկ բնութագրականներով է աշուղը ներկայացնում հայոց լեզուն մանկանը.

*Երբ մեծանաս՝ սիրուն մանկիկ,  
Մորվե հայոց լեզուն քաղցրիկ,  
Հարուստ, քնքուշ, ճոխ, գեղեցիկ,  
Նայիր բառարանին մեջը:*<sup>3</sup>

Աշուղ Զիվանին, լինելով XIX դարի հայտնի ստեղծագործողներից մեկը, օրորոցային երգում արձարծում է հայրենասիրության գաղափար: Բերված օրորոցային տեքստը խրատական է և ունի խոհափիլիսոփայական բնույթ:

Ինչպես հայրենասիրական թեմայով բանավոր ավանդված օրորոցային տեքստերում, այնպես էլ աշուղական օրորոցային այս երգում առանձնակի շեշտադրվում է ազգային դաստիարակության հիմնահարցը:

Գ. Լևոնյանը տալիս է աշուղական երգի հետևյալ ճյուղավորումները<sup>4</sup>՝ *հեռոսական- դյուցազնական, կրոնական-բարոյական, սիրային, ժամանակագրական-նկարագրական, վարդապետական- հրապարակախոսական, ազգային*:

Մեր կողմից քննված աշուղական օրորոցային տեքստը առավելապես մոտ է ազգայինին:

Ինչ խոսք, աշուղական երգը, ի մասնավորի օրորոցայինը, ունի ավանդական օրորոցային երգի հետ շատ ընդհանրություններ թե՛

<sup>2</sup> Լևոնյան Գ., Ազգագրական հանդես, Աշուղը հասարակական գործիչ, № 11, 1904, էջ 147-160:

<sup>3</sup> Զիվանու քնարը, Եր., 1959, էջ 177:

<sup>4</sup> Լևոնյան Գ., Հայ աշուղներ, Բ. Աշուղը գրող, Ազգագրական հանդես, 1904, N11, էջ 130:

կառուցվածքային բաղադրատարրերով և թե՛ բովանդակային պլանով: Երկու տեսակի տեքստերն էլ ունեն ավանդական կայուն բանաձևեր.

*Ննջե՛ գառնուկ, սիրո՛ւն գավակ,  
Ննջե՛ օրորանին մեջը /աշուղական/:*

*Նանի՛կ, նանի՛կ իմ լալա,  
Երկար օրեր ունենաս.../ժողովրդական/:*

Բովանդակային առումով ևս աշուղական և ժողովրդական օրորոցային երգերը ունեն ընդհանրություններ, երկու տեքստերն էլ կարծես օրինանք-մաղթանք, խրատական, խոհական տեքստեր լինեն և ունենան դաստիարակչական նշանակություն: Միջաբերենք հետևյալ տեքստերը՝ քաղված աշուղական և մանկական բանահյուսության նմուշներից.

*Օրոր սսեմ, սիրուն օրոր,  
Ջորանաս, որդի միամոր*

/օրինանք-մաղթանքի տարր պարունակող աշուղական օրորոցային/:

*Դուն լընիս անտատ մորուն,  
Ջարնես քոքիկդ խորուն,  
Քոքիկդ խորուն գարնես,  
Օտոտ շուք անե ճեղերուդ /ժողովրդական/:*

Կին աշուղների ստեղծագործություններում նույնպես մեծ տեղ չեն գրավում օրորոցային տեքստերը: Հավանաբար նրանց գրավել են թեմատիկ նշանակություն ունեցող այլ խնդիրներ: Սակայն մանկաշխարհին նվիրված տեքստեր, թեև սակավ, հանդիպում են նրանց ստեղծագործություններում: Մեր ուսումնասիրության ծիրում ընդգրկել ենք նաև աշուղ Կաղնու «Մանկական աշխարհ» և աշուղ Լեյլու «Մանկությունս» ստեղծագործությունները:

Մեջբերենք երկու ստեղծագործություններից հատվածներ.

*Մենք՝ մանուկներս, ապրում ենք խաղաղ,  
Մենք՝ մանուկներս, ժպտում ենք ուրախ,  
Մենք չենք ուզում երկու աշխարհ,  
Երկու մանկություն լինի,  
Մենք ուզում ենք խաղաղություն  
Ողջ մանուկներին լինի:<sup>5</sup>*

*Մանկությունս մի երագ,  
Ինչպես անցավ՝ չիմացա:  
Օրերիս մեջ պլեկոծ  
Հին հուշերս արթնացան:<sup>6</sup>*

Ինչպես աշուղ Լեյլու «Մանկությունս» ստեղծագործությունը, այնպես էլ մեծն Ջիվանու «Մանկական հիշողություններ»-ը վերհուշ տեքստեր են, քնարա-

<sup>5</sup> Աշուղ Կաղնի /Էմմա Բաղայյան/ Սիրո Կաղնի/երգարան/, Եր., 2005, էջ 26:

<sup>6</sup> Աշուղ Լեյլի, Կարոտի թևով (երգեր), Եր., 2004, էջ 50:

կան խոստովանության լավագույն դրսևորում: Ջիվանին իր ժամանակի կյանքի գնահատականն է տալիս, որը կարծես սոցիալական գանգատ է, բողոք անարդարության դեմ, քաղաքական տազնապների անդրադարձ:

Աշուղ Ջիվանու երգերի մեծ մասը հորինված է այլաբանական հիմքի վրա: Այդ է պատճառը, որ նույնիսկ մանուկներին հասցեագրված տեքստերը դժվար է բնութագրել. Հայրենասիրական<sup>7</sup> է, թե՞ սոցիալական մոտիվներով գրված տեքստ:

Վկայաբերենք հատվածներ Ջիվանու «Մանկական հիշողություն» ստեղծագործությունից.

*Օրորոցից ներքն իջա,  
Հազիվ ճոնիկով ման եկա,  
Ճոնիկս խլեցին, տարան,  
Բերանս ի վար գետին ընկա:*

Նոր ոտքի ելած մանուկը բախվում է անհավասար իրականությանը և իր ներաշխարհում խմորվում են սոցիալ-քաղաքական տազնապներ.

*Թնիցս մեկ բռնող չունիմ,  
Որ վեր քաշե, նորից կանգնիմ,  
Հայրս՝ մեռած, մայրս՝ հիվանդ,  
Եղբայր, ընկեր որտե՞ղ գտնիմ:*

*Նախանձելով կարջ տոտիկիս,  
Գլորեցին խեղճ մանկիկիս,  
Հրեղեն կառքին նստողը  
Աչքը տնկեց իմ ճոնիկիս:*

*Նոր Հերովդես մանկահայած,  
Վերնից կստանաս հարված,  
Որք մանուկներու վրեժը,  
Քեզանից կրհանե Աստված<sup>8</sup>:*

Աշուղական բանարվեստում մանկանց հասցեագրված տեքստերը հանդես են գալիս խոհական, խրատական, սոցիալական, պատմաքաղաքական թեմաներին միահյուսված: Ջիվանու «Մանկական հիշողություն» ստեղծագործությունը թույլ է տալիս դիմել Հովի. Թումանյանին՝ շեշտելու համար այն բանաստեղծական գեղարվեստական ընկալման ընդհանրությունը, որն առկա է երկու մեծերի ստեղծագործական աշխարհում: Բերենք Հ. Թումանյանի «Օրորք» հեղինակային տեքստը.

*Քնե՛, քնե՛, իմ որդի,  
Աչե՛րդ խուսի, չբանաս,  
Որ քո թշվառ հայ ազգի  
Դառն ցավերը չտեսնաս:  
Քնե՛, գուցե երազում  
Տիրոջ բարի հրեշտակը*

<sup>7</sup> Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, Աշխատասիրության<sup>7</sup> Թ. Պողոսյանի, Եր., 2009, էջ 612:

*Քեզի պատմե, թե ինչպես*

*Պիտի փրկվի քո ազգը:*

*Մի պատկեր է նա տխուր,*

*Աչքերն արցունք, ինքը լուռ,*

*Մի սուր է մեր սրտի մեջ,*

*Մեզ այրելու հուր անշեջ:*

*Նրա հիմքը քանդելու,*

*Շատ, շատ դարեր տանջեցին*

*Տաճիկ, պարսիկ, հույն և քուրդ*

*Մինչև վերջը քանդեցին՞:*

Մեր դիտարկումներում անդրադարձել ենք նաև համանման երևույթի՝ դրսևորված անգլիական մշակույթում, մասնավորապես կելտական: Կելտական ժողովրդական երգիչ-ասացողները՝ բարդերը (bard), եվրոպական ժողովրդական արվեստում մեծ դերակատարում են ունեցել: Մեջբերենք Գ. Լևոնյանի անդրադարձը բարդերի գործառույթին. «*Բոլանդիայում բարդերի երգերն ու պատմական հեքիաթները նպաստում էին Բոլանդացուց դեպի հայրենիքն ունեցած սիրոյ պահպանման, նոյն իսկ այդ հանգամանքն պատճառ դարձաւ Անգլիական կառավարութեան նրանց վերայ իւրօ աչքով նայելու, ինչպես Հենրիկոս Զ-րդի և Է-րդի ժամանակներում*»<sup>8</sup>:

Մեզ հաջողվել է գտնել The Whiskey Bards խմբի կատարմամբ «*Օնվահենի օրորոցայինը*»/A Pirate's Lullabye/ երգը: Կարծում ենք, թե ավանդական բանահյուսության կնիքը կա այս ստեղծագործության վրա և խոսում է այն մասին, որ բարդերը իրենց երգացանկում ևս ունեցել են օրորոցային երգը՝ որպես թեմատիկ ժանրային մի տեսակ:

*Sleep bonnie pirate laddie, while the waves they roll*

*Sleep bonnie pirate laddie, ocean breezes blow*

*Feel the ship rock to and fro, hear wind through rigging sigh*

*The gentle ocean sounds below, a pirate lullaby*<sup>10</sup>.

Հետաքրքրություննից գուրկ չէ այն իրողությունը, որ բարդերի արվեստում ստարբերակում են երաժշտության երեք տեսակ՝ Swan-tree (suantrai), որը քնաբեր է, Geantree (Gon-tree)՝ ուրախություն բերող և Goiltraí (Gil-tree)՝ տխրություն բերող<sup>11</sup>:

Ինչպես նկատում ենք, առաջնային է երգի քնեցնելու, հանգստացնելու գործառույթը: Սա ևս փաստում է, որ օրորոցային ժանրը իր կայուն տեղն է ունեցել ավանդական այս արվեստում:

<sup>8</sup> Թումանյան Հ., Բանաստեղծություններ, հ. I, Եր., 1988, էջ 314:

<sup>9</sup> Լևոնյան Գ., Աշուղը պատմական շրջաններում, Օտար ազգերի մէջ. Ազգագրական հանդես, № 10, 1903, էջ 54:

<sup>10</sup> [http://lyrics.wikia.com/wiki/Whiskey\\_Bards:Pirate\\_Lullaby/](http://lyrics.wikia.com/wiki/Whiskey_Bards:Pirate_Lullaby/)

<sup>11</sup> Rowan, Arthur, *The Lore of the Bard: A Guide to the Celtic and Druid Mysteries*, Llewellyn Worldwide, 2003, p. 101.

Այսպիսով օրորոցային տեքստը կարող է ներառել ամենատարբեր թեմատիկ բովանդակային գաղափարներ, խնդիրներ, զգացողություններ, հույզեր: Հետևաբար աշուղների ստեղծագործություններում օրորոցային տեքստերի ընդգրկումը զարմանալի չէ: Աշուղական բանարվեստում մանկանց ուղղված տեքստերի մեկնությունը ցույց է տալիս, որ թեև աշուղների երգացանկում սակավաթիվ են օրորոցայինները, բայց լեզվաոճական ուսումնասիրության համար հարուստ նյութ են:

## АШУТСКИЕ ТЕКСТЫ ФОЛЬКЛОРНОГО ИСКУССТВА АДРЕСОВАННЫЕ ДЕТЯМ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Матикян* \_\_\_

Ашугское песнопение исходит из истоков народного фольклора и, без сомнения, воплощает народную речь и носит печать языкового мышления. Ашугское песнопение, в частности колыбельная песня, является авторским текстом. На протяжении эпох ашугская-народная-авторская цепочка, сливается в единое целое. Более того, подчас тексты ашугских песен трудно отличить от народных. Армянский ашугский фольклор имеет тесную связь с народным фольклором. Колыбельная, которая является своеобразным типом лирических песен, мало встречается в ашугском песенном репертуаре. Одной из причин является ашугская фольклорная тематика и то, что адресатом ашугских текстов является пожилой слушатель.

### Տեղեկություններ հեղինակի մասին

*Մատիկյան Հասմիկ Համիետի* – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
ինստիտուտի կենտրոն, E-mail: hasvrej@msil.ru